

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

Մ. ՆԵՐՍԻՒՑԱՆ

ՍՈՒՎՈՐՈՎԸ ԵՎ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1770—1790 թ. թ.

ՀԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՄԱՆԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1944

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

9(47925)17


ԱՏՈՒԹՎԱՆ Է 1981 թ.

8-63

Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՍՈՒՎՈՐՈՎԸ ԵՎ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1770—1790 թ.թ.

57682
A I 6925



ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՄԱԿՎԱՆՔԵՐՆԵՐԻ
ԵՐԵՎԱՆ 1944

Տպագրված է ՀԽՍՌ Գիտությունների Ակադեմիայի
Նույնագույնություն կողմանը բարեգործությունը.

Պատ. Խմբագիր՝ Զ. Գ. ՌԻԳ-ՈՐԵՎԻՆ.

Академия Наук Армянской ССР

Институт Истории

Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Ա. В. Суворов и русско-армянские
отношения в 1770—1790 г. г.

(На армянском языке)

Изд. АН Арм. ССР. Ереван, 1944 г.

Վ.Յ. 02280 Պատվիր 358, հքատ. № 227, տիրած 3000.

23/4 տպ. մամուլ, մեկ մամուլում 25,600 տպ. նիշ:

Ստորագրված է տպագրության 25/XII 1944 թ.

ՀԽՍՌ Գիտությունների Ակադեմիայի տպարան, Երևան.

Ոռուսհայկական հարաբերությունները XVIII
 դարի երկրորդ կեսում ծավալվեցին նոր, քաղաքական
 տվիրի լայն մակարդակի վրա: 1760-ական թվական-
 ներին ստեղծված և հետագա տասնամյակներում շա-
 րունակվող միջազգային բարեհաջող իրադրության շնոր-
 հիվ ոռուսական արտաքին քաղաքականությունը նորից
 ակտիվ ու համարձակ դարձավ: Ցարական կառավա-
 րությունն ամենայն լրջությամբ առաջ քաշեց Սկան-
 դիան, Միհրձ-կառավարական մարզերը և Անդրկովկասը Ռու-
 սաստանին միացնելու կարեոր խնդիրը: Եկատերինա
 Ա-ի արքունիքը անական և աշխույժ քաղաքական հարա-
 բերություններ սկսեց անդրկովկասյան ժողովուրդների,
 այդ թվում և հայ ժողովրդի ազատագրական շարժ-
 ման գործիչների ու ղեկավարների հետ: Վերջիններս,
 որ իրենց հոյացքն ուղղել էին զեպի Հյուսիս և ամե-
 նայն իրավամբ միայն նրանից էին սպասում իրական
 օգնություն, անմիջական բանակցությունների միջ
 մտան և սերտ կապ հաստատեցին ուսւական ղեկավար
 շրջանների հետ: Ռուս-հայկական հարաբերություն-
 ները թևակոխեցին նոր փուլ և մշտական, լուրջ քա-
 ղաքական բնույթ ստացան: XVIII դարի երկրորդ
 կեսում տեղի ունեցող ուսւահայկական քաղաքական
 հարաբերությունների մեջ, ի թիվս մյուսների, գոր-
 ծուն մասնակցություն ունեցավ ուսւ մեծ զորավար
 Ալեքսանդր Վասիլևիչ Սուվորովը:

Հոչտկավոր զորավարն իր հարուստ և փառավոր զործունեության ընթացքում առիթներ ունեցավ շփկելու, ծանոթանալու հայ հասարակության հետ, ուսումնաւորելու Հայաստանը, հայ իրականությունը: Որպես ուսունայիկան քաղաքական հարաբերությունների ակտիվ գործիչներից մեկը, Սուվորովի զբաղվեց հայ ժողովրդին այն ժամանակ հուզող մի շարք հարցերով և ջերմ, քարեկամական հարաբերություններ հաստատեց հայ ազատագրական շարժման ղեկավարների հետ: Մուսական ռազմական արվեստի հանճարի այդ փայլուն ներկայացուցիչը մեծ հետաքրքրություն ու համակրանք ցուցաբերեց հայ ժողովրդի ազատագրության գործի նկատմամբ: Այդ է պատճառը, որ դեռ իր ժամանակ Սուվորովի առանձին սեր ու հարգանք է վայելել հայ մասսաների ու քաղաքական գործիչների մեջ:

2

Սուվորովի առաջին անգամ հայ հասարակության հետ անմիջականորեն շփկել և նրա հարցերով զբաղվել է 1778 թվականին, երբ տեղի ունեցավ Ղրիմի մոտ 15,000 հայ բնակչության գաղթը Ազովյան նահանդ (այժմյան Նոր-Նախիչևանը) և մոտակա շրջանները): Սուվորովի այդ առաջին ծանոթությունը և շփումը հայերի հետ տեղի ունեցավ հետեյալ պարտգաներում:

Մուսաթուրքական առաջին պատերազմը Մուսաստանի համար բավականին նպաստավոր վախճան ունեցավ: 1774 թվականին կնքված Քյուչուկ-Կայնարջիի հաշտությամբ Մուսաստանին միացվեցին Բուղի և Դնիալ-

ըի միջև լնկած տարածությունը, կինըուրնը, կերչը, ենիկոլը և Աղովը: Այդ նույն գաշնագրով Ղրիմի խառնությունը, որ մինչ այդ թյուրքիայի վասսալ միավորներից մեկն էր, հայտարարվեց «ինքնուրույն և անկախ»:

«Անկախ» հոչակված Ղրիմի իշխանությունը տիպիկ խանական մի բոնապետություն էր: Երկրում տիրում էր գաժան ոհմիմը, բոնակալ իշխանավորների քմահաճույքը, աղքատությունն ու թշվառությունը: Դիրեյների ռազմական հղորությունների ու հուշերի բնագավառը, փարթամորեն աճում էին ներքին երկարակությունները, երկրի տնտեսական կյանքը խիստ անկում էր ապրում: Բնակչության մի զգալի մասը, որ կազմում էին քրիստոնյաները՝ հայերը և հույները՝ զանգում էր տնտեսական ու բարոյական տագնապի մեջ: Տնտեսական կեղեցքումներից զատ՝ քրիստոնյա բնակչությունը հնթարկվում էր արտատնտեսական հարկադրման և տղային-կրոնական ճնշման բոլոր բիրու ու վայրենի ձևերին: Օրեցօր աճում էր ժողովրդական մասսաների դժգոհության ու զայրույթի ալիքը: Առանձնապես ուժեղ էին հուղումները խանական գաժան ոհմիմի տակ տառապող հայերի ու հույների մեջ, որոնք օգնության ակնկալություններով իրենց հայացքը վազուց արգեն հառել էին Ռուսաստանին:

Տնտեսական, քաղաքական և ռազմական սնանկացման հասած Ղրիմի խանությունն ի վեճակի չէր քիչ թե շատ մեայուն պատճեղ կանգնեցնել ոտսական ակտիվ արտաքին քաղաքականության դեմ: Չնայած Քյուչուկ-Կայնարջիի գաշնագրի առկայությանը, Ղրիմի ահաբեկված ու զրամով սիրաշահված խաներն առ-

տիճանաբար զիջումներ էին անում Եկատերինա
II-ի դիպլոմատիային և զլուխ խոնարհում հյուսիս-
սից շարժվող ոռւսական հզոր բանակի առաջ, Յա-
րական պետությունն առիթը բաց չէր թողնում և,
օգտվելով ստեղծված նպաստավոր իրադրությունից,
կատարում էր իր համար օգտավետ ու անհրաժեշտ մի
շարք օպերացիաներ։ Այդպիսի օպերացիաներից մեկն
էր Ղրիմի քրիստոնյա բնակչության գաղթեցումը դեպի
Մերձազային տափաստանները, դեպի Աղովի նա-
հանգը և Ռուսաստանի հարավային մյուս շրջանները,
որոնք այն ժամանակ նովորոսիա հայվաքական անունն
էին կրում։ Տնտեսական ու քաղաքական նպատակներ
հետապնդող այդ գաղթի կազմակերպումը դարձավ ոռւ-
սական կառավարող շրջանների ուշադրության առար-
կաններից մեկը։ Ռուսական արքունիքը բավական ճիպ
ու ջանք թափեց այդ գործը հաջողությամբ սկսե-
լու և ավարտելու համար։

1777 թվականի մարտին Եկատերինա II կայսրու-
հին Ղրիմի քրիստոնյա բնակչության գաղթեցման
գործի ընդհանուր զեկավարությունը հանձնարարեց
ռուսական զորքերի հրամանատար գեներալ-ֆելդմար-
շալ կոմս Ռումյանցեին և նովորոսիայի կառավարիչ
իշխան Գրիգորի Պոտյումկինին։ Վերջիններս գործի
անմիջական կազմակերպման պարտականությունները
զրեցին այն ժամանակ Ղրիմում գտնվող ռուսական
զորքերի հրամանատար գեներալ-պորուչիկ Պրոզրով-
սկու և Ղրիմի խանի մոտ ռուսական «ռեզիդենտ» նշա-
նակված կոնսուտանտինովի վրա։ Գեներալ Պրոզրովսկին
պետք է նախապատրաստեր և անմիջականորեն գլխա-
վորեր զաղթը, աշխատելով խռոսափել հարավոր զանա-
պան բարդություններից։ Սակայն Պրոզրովսկին չար-

դարացրեց իր վրա զբաժնույթը: Ղեկավար շրջանակինը նրանից գժգոհ մնացին: Նա հեռացվեց իր պաշտոնից: Եվ ահա 1778 թվականի գարնանը Պրոգրովսկու պաշտոնը հանձնվեց արդեն մեծ անուն վաստակած դեներալ-պորուչիկ Ալեքսանդր Վասիլևիչ Սուվորովին: 1778 թվականի մայիսի 17-ին իշխան Պոտյունինը հատուկ հրամանագրով առաջարկում էր Սուվորովին անհապաղ սկսել Ղրիմի քրիստոնյաներին՝ հայերին և հույներին գաղթեցնելու գործը և ըստ հնարավորին շուտ վերջացնել այն:

Սուվորովը մեծ եռանդով սկսեց իրեն հանձնարարված բավական բարդ և գժվարին գործը: Նա ծավալեց աշխույժ և լայն գործունեություն: Իր այդ գործունեության ընթացքում Սուվորովը մոտիկից ուսումնասիրեց Ղրիմի հայ բնակչության տնտեսական, բարոյական վիճակը, նրա կարիքներն ու պահանջները: Ապագա գեներալիստուսը բազմիցս հանդես եկավ հայերի շրջանում, լսեց նրանց սլահանջները, գանգատեները և ապա հորդորներ արեց ու խոստումներ տվեց նրանց: Գեներալ Սուվորովը մի քանի անգամ ընդունեց հայ բնակչության պատգամավորներին և նրանց հետ քննության առավ գաղթի հետ կապված մի շարք հարցեր: Կոմս Ռումյանցե-Զադունայսկուն ուղղված 1778 թ. հուլիսի 30 թվակիր իր ղեկուցագրերից մեկի մեջ Սուվորովը հայ բնակչության պատգամավորներին իր կողմից ընդունելու մասին գրում էր.

«Զանազան տեղերից այստեղ եկած հայ պատգամավորներին պարոն ուղիղենտ կոնստանտինովի արեց լրիվ պարզաբանումներ... նրանք [հայ պատգամավորները] եղան նաև ինձ մոտ, և և նրանց բացատրեցի

քրիստոնյաների տեղահանման մասին սրբազնագույն
միտրոպոլիտ Իգնատիոսի՝ կողմից տրված կետերը,
որոնց հետ հայ վարդապետ Պետրոս Մարկոսյանը և
հայ կտթողիկ քահանա Հակոբը համաձայն են: Սրանց
հրատարակած հրովարտակի պատճենն ընդ սմին ներ-
կայացնում եմ: Պատգամավորներն ընդունելով այն
հօգուտ իրենց կենսական շահերի, ակներե գոհունա-
կությամբ ցըվեցին: Բոլոր քրիստոնյաների ամենա-
մեծ ցանկությունն այն է, որ բնակեցվեն միասին և
ձեռնուու տեղերում, որի արդյունքը կերեա նրանց
սերնդի մեջ: Նրանք ափսոսում են թողնել իրենց ան-
շարժ կայքը, ուստի ևս հարկադրված էի խոստանալ
որ այստեղ, հենց տեղում, կբավարարվեն արքունի
դանձարանից, այլապես նրանք չեն համաձայնին:¹

Դրիմի լուսավորչական հայերի առաջնորդն այդ
ժամանակ Պետրոս վարդապետ Մարկոսյանն էր, իսկ
կտթողիկ հայերինը՝ Հակոբ վարդապետը: Սուվորովը
նրանց հետ մատիկ հարաբերություններ հաստատեց
և անգամ դրամական ընծաներ տվեց—Պետրոս վար-
դապետին՝ 2800 ռուբլի, իսկ Հակոբ վարդապետին՝
1500 ռուբլի: Հայ բնակչության կրօնական այդ պե-
տերը լայն և ակտիվ օժանդակություն ցույց տվին
Սուվորովին և գործուն մասնակցություն ունեցան
հայերի գաղթի կազմակերպման մեջ: Իշխան Պոտյում-
կինին ուղարկած իր 1778 թ. հուլիսի 17-ի ղեկուցա-
դրում Սուվորովը նրանց մասին գրում էր.

«Հայերի գլխավոր հոգիոր պետերն են Պետրոս
վարդապետ Մարկոսյանը և [Հումի] պապից քիչ թո-

¹ Н. Дубровин. „Присоединение Крыма к России“. Рес-
крипты, письма, реляции и донесения, т. II, СПБ, 1885 г.,
էջ 608—609:

շակ ստացող կաթոլիկական դավանանքի Հակոբ քահանան. բայց վերջինս հարզված է իր հոտի լավագույն մարդկանց կողմից»:¹

Հայերին գաղթեցնելու գործում Սուվորովին նշանակալի օդնություն ցույց տվին նաև Պետերբուրգում բնակություն հաստատած հարուստ Հովհաննես Լաղարել և արքեպիսկոպոս Հովսեփ Արզությանը² Վերջինս Սիմեոն կաթողիկոսի կողմից 1773 թ. նշանակվել էր Ռուսաստանի հայերի հոգեոր առաջնորդ: Արզությանը հասուլ զիմում արեց Դրիմի հայերին, հորդորվելով նրանց գաղթել Ռուսաստան:³

Գաղթի ենթակա քրիստոնյա բնակչության՝ հայերի և հույների նկատմամբ Սուվորովը հանդես ըերեց ուշագիր և սրտացավ վերաբերմունք: Մեծ զորավարն աշխատում էր ամեն կերպ օգնել օժանդակել խանական անտեսական կեղեքումներին ու ազգային ձնշումներին ենթակա քրիստոնյա բնակչությանը և ապահովել նրանց կյանքը—ֆիզիկական զոյտությունը դանաղան օրհասներից: Վերը հիշված Կոնստանտինովին ուղղված 1778 թ. հուլիսի 28 թվակիր նամակում Սուվորովն ասում էր.

¹ Նույն տեղ, էջ 560:

² Հովհաննես Լազարել (1735—1801) և Հովսեփ Արզությանը (1743—1801) XVIII դարի երկրորդ կեսի հայ ապատաղբական շարժման նշանավոր զեմքերից են: Նրանք աշխատառմ էին Ռուսաստանի օդնությամբ ազատել հայ ժողովուրդը պարսկական ու թուրքական լծից:

³ ԱՅՆ—«Հովսեփ կաթողիկոս Արզության», Թիֆլիս, 1902, էջ 52: Սուվորովի զինավորությամբ կտարված՝ Դրիմի հայերի գաղթի մասին պատմում է նաև ինքը՝ Արզությանը իր ձեռագիր հեշտատկարանի առաջին «Քավթարժում»: Տես՝ ՀԱՍԲ Դրական Թանդարանի արխիվ, «Նոր ձեռագիրներ»:

«Բարձրագույն գայիսոնի հովանու տակ այստեղի քրիստոնյաներն ամենաչնչին հետապնդում անդամ չպիտի կը են ում կողմից էլ որ լինի»:¹

Իշխան Պոտյոմկինին ուղարկած 1778 թ. հուլիսի 25 թվակիր զեկուցագրում Սուվորովը գրում էր այն մասին, որ Ղրիմի քրիստոնյաների կյանքը վտանգի տակ է և որ ինքը, այդ բանը նկատի առնելով՝ կտրուկ միջոցառումների է դիմել և համապատասխան կարգադրություններ արել զորքին:

«Այստեղի քրիստոնյաների մի մասը մինչև օրս էլ ենթակա է իր կյանքի և գույքի վտանգին. դրա դեմ հարկ հղած նախազգուշական միջոցները ձեռք են առնված և զորքերին այդ մասին պատշաճ հրամաններ են տրված: Թաթարները գործում են սպառնալիքով, սադրանքով, խոստումներով և իրենց համար սովորական ուխտազրուժ նենգությամբ»:²

Պոտյոմկինին ուղարկած իր բազմաթիվ զեկուցագրերում Սուվորովը շարադրում էր Ղրիմի քրիստոնյաների պահանջները և համառորեն պնդում, որ նրանք Ղրիմում թողած իրենց անշարժ գույքի զիմաց պետք է դրամական փոխհատուցում պատահան»:³ 1778 թ. հուլիսի 17-ին Սուվորովը կոմս Ռումյանցե-Զադունայսկուն ներկայացնում է մի զրություն, ուր ման-

1 Н. Дубровин. „Присоединение...“, т. II, § 598.

2 Նույն տեղ, § 587.

3 Սուվորովի այս և միենույն հարցին վերաբերող մյուս զեկուցագրերն առաջ նյութ են մատակարարում Ղրիմի հայքնակ-չության գաղթի ու Նոր-Նախիջևանի հիմնադրման պատմության համար: Պետք է միայն ցանկալ որ այդ թիմայի համար լայ-նորեն օգտագործվեն ուստի մեծ զորավարի հաղորդած տվյալները:

բամասնորեն նշում է այն բոլոր միջոցառութմները, որոնք անհրաժեշտ էին գաղթի ժամանակ քրիստոնյա բնակչության վիճակը բարվոքելու համար։ Հայ և հույն բնակչությունը նույն թվին Սուվորովի միջոցով Եկատերինա II կայսրունուն առաջադրում էր մի շաբթ պահանջներ և այդ թվում բավարար վարձատրություն Ղրիմում թողնվելիք անշարժ գույքի համար, արքունի ծախոսվ տեղափոխություն, տասնամյա աղատություն բոլոր հարկերից և բոլոր մասնավոր ու արքունի պարտականություններից, ազատ կառավարություն՝ սեփական օրենքներով և այլն¹։ Հետաքրքիր է հիշել, որ Սուվորովի համառ պնդումների շնորհիվ հաջողվեց ազատել Ղրիմի բեյերի մոտ տասնյակ տարիների ընթացքում գերության (ստրկության) գատապարտված մի քանի հազար վրացիներ։

Ղրիմի հայ և հույն բնակչության գաղթը, որ սկսվեց 1778 թ. հուլիս ամսին, նույն թվականի սեպտեմբերին վերջացել և արդեն կատարված փաստ էր դարձել 1778 թվականի սեպտեմբերի 18-ին Սուվորովը Ռումյանցեին գեկուցում էր.

«Ղրիմի քրիստոնյաների տեղահանումն ավարտված է։ Ազովյան նահանգն են դնացել երկու սեռի 31,098 հոգի։ Այդ մասին Զերդ պայծառափայլության ուղղված տեղեկագիրը կցում եմ։ Ենիկոլում և Զերկեսում մնացել են ձմեռելու 288 հոգի։ Հունական սրբազնագույն միտրոպոլիտը և հայ բարեկրոն վարչապետը այսօր մեկնեցին քրիստոնյաների հանից, միաժամանակ նաև՝ կաթոլիկ քահանա Հակոբը։ Սույն

¹ Ե. Նահաղիզ—«Նոր-Նախիջևանը և Նոր-Նախիջևանցիք», Թիֆլիս, 1903 թ., էջ 34։

տեղահանման վրա այստեղ ծախսվել է ավելի քան
130,000 ռուբլի ուղեգրամ։ Այդ մասին տարբեր տեղե-
րից զեռ չստացված տեղեկագրերը ժողովելուց հետո
չեմ հապաղի Զերդ պայծառափայլությանը հապորդելու
ավելի սառըցգու։¹

Հայ գաղթականությունը բնակություն հասա-
տեց Ռոստովից ոչ հեռու, Դոնի ափին, այժմյան Նոր-
Նախիջևանում և նրա շրջակայքում՝² Այսաեղ նա,
մանավանդ սկզբնական շրջանում, հնթարկվեց նոր փոր-
ձությունների։ Զրկանքների ու խիստ կտրիքի մատնը-
ված հայ բնակչությունը դիմումներ արեց ցարական
արքունիքին և նրա բարձրաստիճան սղաշտոնյաներին։
Եվ բնորոշ է, որ այստեղ ես, իր ծանր գրության
բարվոքման ակնկալություններով, հայ գաղթականու-
թյունը նորից և առաջին հերթին դիմում էր իր ծանոթ
գեներալին։ 1779 թ. ապրիլի 18-ին հայ գաղթակա-
նությունը հավաքական մի խնդրագիր ներկայացրեց

1 Ի. Դյուրովի. «Պրոօւնինեա...», տ. II, էջ 710.

2 Ռոստովի շրջանը տեղափոխված՝ Ղըլմի հայ գաղթականու-
թյունը եկատերինա Ա-ի 1779 թվականի նոյեմբերի 14-ի հրո-
վարակով ստացավ 12,000 դեսյատին հող, 10 արով աղատվեց
հարկից, արտօնվեց ներքեն ինքնավարությամբ և այն նույն
այդ հրովարտակի հիման վրա հայ գաղթականությունը 1781
թվականի ապրիլի 21-ին հիմնադրեց Նոր-Նախիջևան քաղաքը՝
եկատերինա Ա-ի այդ հրովարտակը 1799 թ. վերահաստատեց Պալել
1-ը, իսկ 1802 թվականին՝ Ալեքսանդր I-ը՝ Ղըլմի հայ գաղթա-
կանության մի փոքրիկ մասը՝ հայ կաթոլիկները, հաստատվեցին
եկատերինուլավ (այժմյան Դնեպրոպետրովսկ) քաղաքում (Հ.Բ. Վ.
Վուշներյան—«Պատմություն գաղթականության նըման Հայոց»,
Վենետիկ, 1895 թ., էջ 21; Երևանդ Շահագիզ—«Պատմական քաղ-
գածքներ», Թիֆլիս, 1903 թ., էջ 53—56):

Սուվորովին: Այդ լինգրագրում հայ հասարակություն-նը պատմում էր իր անմիտիթար դրության մասին և ինդրում նրա միջամտությունն ու օգնությունը: Ահա այդ հետաքրքիր դիմում-խնդրագիրը.

Հայ հասարակություն զեկաւցագիրը զեներալ-պարուչիկ և կալվածի Սուվորովին¹

Զերդ պայծառափայլություն: Դրիմից մեզ տեղահանելիքս, բացի հայոնի 14 կետերից, Դուք հաճել էիք խոստանալ որ մեր թողած տների փոխարեն կտրվեն նույնպիսիները՝ կառուցված, տեղեր կհատկացվեն ըստ մեր ցանկության, թոշակ և պարեն կտրվի: Բայց իրք մենք տեղ հասանք, մեզ հատկացրին այնպիսի տեղեր, ուր ոչ ջուր կա, ոչ անտառ, և գեռ հարկադրում են մեզ բոլորիս ստորագրել, որ դրանք մեզ համար հարմար են, մի բան, որ մենք չենք կարող անել այդ տեղերի անպիտքության պատճառով: Առաջ բոլորին թոշակ և պարեն էին տալիս, իսկ այժմ սմանց բոլորովին չեն տալիս: Մանչպար մարդկանց բնակեցնում են մեզնից 120 վերստ հեռու: Այս մասին թեսպետ Ազովի նահանգապետ Վաս. Ալեքս. Զերտկովին ինդրել ենք, բայց նա մեզ ասել է, որ զրա համար մենք Զերդ գերազանցությունից ոչ մի զրավոր վկայություն չունենք: Մենք զրան պատասխանեցինք, որ մենք այդ բանը Զերնից չենք խնդրել զրա համար էլ մեզ չի տրվել և թեպէտ մենք ցանկանում ենք բնա-

¹ Դիմումի հայերեն տեքստը ձևոքի տակ չունենալու պատճառով բերում ենք նրա թարգմանությունը ռուսերենից, որը հապարակվել է Դուբրովինի կազմած փաստոթղթերի ժողովածուի մեջ:

կություն հաստատել Ազովյան ծովի ափերին, այստեղ
կառուցված ամբությունների մոտ, ջրային ճանապարհ-
ներով առևտուր՝ անելու համար, և որպեսզի ունչպար
մարդիկ բնակեցված լինեն մեղնից ոչ ավելի, քան 5
վերստ հեռավորության վրա, սակայն այս բոլորից ոչ
մի օգուտ. և ոչ միայն պարզեադրամից, այլև վերջին
ունեցվածքից զրկվել ենք ավաղակների և այլ ճնշում-
ների պատճառով ու հասել ենք այնպիսի ծայրահեղ
վիճակի, որ մի ժամանակ իրենց մոտ լավ ապրուստ
ունեցող մարդիկ այժմ գոնեղուու ընկած՝ մուրում
են, իսկ ոժանք էլ սովահարությունից ստիպված՝
բոլորովին չնշին փողով կամ հացով փոխում են իրենց
երեխաններին. Սովից և իրեւ սնունդ ջրի մեջ եփած
թեփի զործածությունից շատ երեխաններ են մեռիւ.

Մեր այս դառնապետ վիճակի մասին մենք վա-
ղուց ինդրամատույց կլինեինք Զերդ գերազանցու-
թյան և ավելի բարձր, բայց մեզ թույլ չին տալիս, և այս-
տեղ էլ մենք չկարողացանք մանրամասն նկարագրել
մեր ցավերի թեկուղ մի տասերորդ մասը. Ուստի խո-
նարհարար խնդրում ենք Զերդ գերազանցություն մեզ
աղատել այդպիսի ճնշումից և բոլորին լրիվ մատակա-
րարել որի համար մենք աղոթարար կթնանք հավի-
տյան: Իսկ եթե Զերդ գերազանցությունը մեզ չովա-
նավորի, ապա մենք պետք է օր ու գիշեր (այն ուրա-
խության փոխարեն, որի մասին մենք երազում էինք
տեղահանությունից առաջ) արցունք թափենք. այժմ
մեր ամբողջ եռյալ դնում ենք Աստծու և ապա Զերդ
գերազանցության վրա»:¹

¹ Н. Дубровин. „Присоединение...“, т. III, б2 152—
153. ընդգծումը մերն է—Մ. Ն.

Հայ հասարակության կողմից իրեն ուղղված այս
դիմումը Սուվորովս անհետեանք չթողեց։ Գաղթական-
ների դրությունը բարվոքելու, նրանց օգնելու ուղ-
ղությամբ նա, որքան այդ թույլ էին տալիս նրա իրա-
վասության սահմանները, մի շարք կարգադրություն-
ներ ու գործնական քայլեր արեց։ Սակայն իր ձեռ-
նարկած միջոցառումներից զատ՝ նա, դադթականու-
թյանն օգնելու նպատակով, մի շարք ղեկուցազրեր
ներկայացրեց իշխան Պոտյոմկինին։ Վերջինիս անու-
նով հասցեազրված իր այդ ղեկուցազրերից մեկի մեջ
Սուվորովը իրեն հատուկ լակոնական ռնով գրում էր.

«Ղրիմի գաղթականներն իրենց ներկա վիճա-
կում կրում են շատ զրկանքներ։ Ողորմած աշխա-
լեցեք նրանց վրա, որոնք այնքան շատ բան են զնաբերել
զահի համար։ Քաղցրացրեք նրանց դառը հուշերք։»¹

Սուվորովի այս առղերն ինքնին խոսում են այն
ուշադիր և սրտացավ վերաբերմունքի մասին, որ ունե-
ցել է ոռւս մեծ զորավարը հայ դադթականության
նկատմամբ։

3

Սուվորովս առիթ ունեցավ հայ ժողովրդին հու-
զող հարցերով երկրորդ անգամ զրադվելու 1780—1781
թվականներին։ Այս անգամ արդեն խնդիրը մասնավոր
չէր, այժմ հարցը չէր վերաբերում հայ ժողովրդի մի-
այն մի հատվածին։ Այս անգամ օրակարգում զրված
էր Հայաստանը Ռուսաստանին միացնելու բավական
դժվարին ինդիրը։

¹ А. Петрушевский. «Генералиссимус, князь Суворов», том I, СПБ, 1884 г., § 212. Ընդգծումը մերն է—Մ. Ն..

1780-ական թվականներին սուսական կառավարող շրջանները նորից առաջ քաշեցին Անդրկովկասի և մասնագորապես նրա արևելյան շրջանների հարցը: Ուռւսական արքունիքում Անդրկովկասը Ուռւսաստանին միացնելու խնդիրը դիտվեց որպես սուսական արտաքին քաղաքականության կարևորագույն և տաճնահերթ խնդիրներից մեկը: Եկատերինա II կայսրուհին ցանկանում էր մոտավորապես կրկնել Պյոտր I-ի 1722 թվականի պարսկական արշավանքը: Բայց նրա նախագըծը վող ձեռնարկությունն ուներ ավելի լայն հեռանկարչություն և պիտի կատարվեր ավելի մեծ մասշտաբներով:

Անդրկովկասը Ուռւսաստանին միացնելու սուսական քաղաքականությունը չէր հակասում հայ և վրաց ժողովուրդների քաղաքական իզեալներին: Ճիշտ է, իլյուզիանները շատ էին, բայց համենայն դեպք եղած հակասությունները վճռական նշանակություն չունեին: Տնտեսական բացարձակ թալանի և բարոյապես իսպառ սպանող խանական դաժան ռեժիմի տակ տնօքող հայ ժողովուրդն իր ազատազրությունը զրեթե առանց վերապահումների կապում էր Ուռւսաստանի հետ: Ունահարված ռայան լավագույն ապագայի իր հույսերը տեսնում էր սուսական բանակի գեպի Անդրկովկաս սպառվող հաղթական արշավերի մեջ: Հայ քաղաքական գործիչները և ազատազրական շարժման զեկավարներն իրենց ծրագրերի իրականացումը չէին պատկերացնում առանց Ուռւսաստանի ռազմական ռեժիմ գործուն ժամանակցության: 1760—1790-ական թ., թ., հայ ազատազրական շարժման նշանավոր գործիչներ Հովսեփ Էմինը, Շահամիր Շահամիրյանը, Հովհաննես Լազարեց և Հովսեփ Արդությանը իրենց քաղաքական պրակտիկայի տակտիկան ու ստրատեգիան ամրով-

ջովին համաձայնեցնում էին ոռւս պիտականության ուղմական նախագծերի ու պատրաստությունների հետու Ստեղծված իրադրությունը և գործի հաջող ելքը բացասում էին գործունեության այլ ուղիներ։ Այս է պատճառը, որ երբ 1779—1780 թվականներին ոռւսա-

1 Հովսեփ Էմինը (1726—1809) XVIII դարի հայ ազատական շարժման կարկառուն դեմքերից մեկը և հայ հասարակական մտքի զարգացման բուրժուա-գիւղուատական, հակաֆեռական էտապի առաջին ականավոր նրկայացուցիչն է։ 1762—1763 թ. թ. նա եղավ Գետերբուրգում ու Մոսկվայում և Հայաստանը պարսկական տիրապետությունից ազատելու նպատակով բանակցություններ վարեց շարական արքունիքի բարձրաստիճան պաշտոնյաների հետ Տարիներ շարունակ նա եռանդուն աշխատանք ծավալեց Անդրկովկասում, տեսակլցություններ ունեցավ վրաց հերակլ թագավորի հետ Էմինի քաղաքական ծրագիրը և լուսավորական առաջավոր գաղափարները, սակայն, լայն արձագանք չկատան Անհաջողությունների հանդիպելով՝ այդ փայլուն գործիչը վերջիվերջ հեռացավ Անդրկովկասից և բնակություն հաստատեց Կալկաթայում։ Այստեղ նա գրեց մեծ արժեք ներկայացնող իր ինքնակենսագրական աշխատությունը, որը և լույս տեսավ 1792 թվականին Լոնդոնում, անգլերեն լեզվով։ (Life and Adventures of Joseph Emin. Second Edition. Calcutta, 1918)։ Շահամիր Շահամիրյանը (1723—1797) XVIII դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման ամենաականավոր գործիչներից ու դեկավարներից մեկն է։ Մազրասից, ուրիշշատական բնակություն էր հաստատել, նա նամակագրական կատեր ուներ Էջմիածնի կաթողիկոսության, վրաց հերակլ թագավորի, Հովսեփ Արդությանի և ժամանակի նշանակոր այլ հայ գործիչների հետ։ Շահամիրյանը ձգում էր այն բանին, որպեսզի հայ-վրացական միացյալ ուժերով տապալի պարսկական տիրապետությունը և վերականգնի Հայաստանի ու Վրաստանի քաղաքական անկախությունը։ Նա կարծում էր, որ այդ ծրագիրը հնարագոր կլինի իրագործել Մուսաստանի օգնությամբ։ Շահամիրյանը գրել է մի շարք գործեր, որոնցով աշխատել է քարոզել իր ժամանակի առաջավոր լուսավորական գաղափարները։



կան արտաքին քաղաքականությունն օրակազի խնդիր գարձրեց Անդրկովկասի հարցը, հայ իրականության մեջ նորից փչեց մեծ հույսեր և սպասելիքներ սերմանող ջերմ հովը:

Առաջ քաշելով Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու հարցը, ուսւական արքունիքը 1779 թվականից արդեն աշխույժ և գործնական քայլեր սկսեց առաջարկված խնդրի լուծումը նախապատրաստելու համար: Հարկավոր էր նախ և առաջ բավարար չափով ուսումնասիրել Անդրկովկասը, նրա ուսպման ստրատեգիական հնարավորությունները, տեղագրությունը, գլխավոր ճանապարհները, ժողովուրդները, նրանց քաղաքական իդեալները, տեղական իշխանությունների ուսպմական ուժը և ապա կազմակերպել հաղթական արշավանք դեպի Անդրկովկաս:¹ Խնդիրը բավական բարդ էր: Եվ ահա այս լուրջ և պատախանատու խնդրի կատարումը ցարական կառավարությունը հանձնարարում էր փորձված, ժրածան և պարտություն չիմացող Ալեքսանդր Վասիլիչ Սուվորովին: Սուվորովի կենսագիր Ա. Պետրովշևսկին խոսելով այս մասին, գրում է,

«Պոտյումկինի 1780 թ. հունվարի 11-ի հրամանագրում ուղղակի ասված է, թե՝ «փութաջան ծառայությունը, ուսպմական արվեստը և միշտ ձեռք բերած հաջողությունները հիմք ծառայեցին նշանակելու հատկապես Սուվորովին»:²

1 Անդրկովկասն ուսումնասիրելու հարցը ուսւական արքունիքի համար առաջնահերթ ու կարևոր խնդիր էր, որովհետեւ սուսպական պետական դեկավարող շրջաններն այդ ժամանակ բավական աղոտ գաղափար ունեին Անդրկովկասի մասին:

2 А. Петрушевский. „Ген. кн. Суворов“, том I, էջ 219.

1779 թվականի վերջին Եկատերինա Ա-ն ընդունեց
Սուվորովին, բացատրեց նրան խնդիրը, ավեց անհրա-
ժեշտ հրահանգներ, որից հետո և մեծ զորավարը մեկ-
նեց Աստրախան՝ կատարելու Անդրկովկասի նկառ-
մամբ ունեցած իր միսիան:

«Զմեռը, նոյեմբերին թե գեկտեմբերին, Սուվո-
րովին կանչեցին Պետերբուրգ: Թագուհին նրան ընդու-
նեց շատ բարեհաճ կերպով և, ի նշան հատուկ ուշա-
ղըության, դեկտեմբերի 24-ին իր սեփական զգեստից
հանեց ու նրան շնորհեց Ս. Ալեքսանդր Նեվսկու օրդենի
բրիլիանտե աստղը: Նրան բացատրվեց, թե հատկա-
պես ինչ հանձնարարություն է դրվում իր վրա, հանձ-
նվեց Պուլյամկինի սեփական ձեռքով գրված հրամա-
նագիրը և հրահանգ: Սուվորովը Մոսկվայի ու Պոլտա-
վայի վրայով մեկնեց Աստրախան՝ գոհացած և՛ ընդու-
նելությունից, և՛ հանձնարարությունից»:¹

Սակայն Սուվորովն իրեն հանձնարարված խնդրի
լուծմանը ձեռնամուխ եղավ դեռ մինչև Աստրախան
մշկնելը: Պետերբուրգում գտնված ժամանակ արդեն
Սուվորովը բավական մանրամասն տեղեկություններ
հավաքեց Անդրկովկասի և մասնավորապես Հայաստա-
նի մասին: 1780 թվականի հունվարի ընթացքում նա

¹ Նույն տեղ, էջ 218: Սուվորովը ուստական արտաքին ակ-
տիվ քաղաքականության ջերմ պաշտպաններից մեկն էր: Նա մեծ
հետաքրքրություն էր հանդես բերում և դեպի Հայաստանի հարցը:
«Հունական նախագծի կապակցությամբ,—զրում է եղովը,—որ
զբաղեցնում էր մեծ միապետութու գործակիցների մտքերը, են-
թադրվում էր վերականգնել Հայաստանի քաղաքական անկախու-
թյունը Ռուսաստանի գերագույն պրոտեկտորատի տակ: Այդ
ծրագրին առանձին ջերմությամբ էլին վերաբերվում իշխան: Պո-
ւոյոմկինը և Ա. Վ. Սուվորովը („Կավказский Вестник“, Տիֆլիս
1901 թ., № 10. Փորձություն):

մի քանի անդամ տեսակցություն ունեցավ Հովհաննես Լազարեսի և Հովհաննի Արդությանի հետ, որոնք ոռոսական արքունիքում ճանաչված էին որպես Հայութանը ներկայացնող քաղաքական գործիչներ։¹ Այդ տեսակցությունները, որ կրում էին կիսապաշտունական բանակցությունների բնույթ, Սուվորովի համար շատ հարցեր պարզեցին։ Հոչակավոր զորավարն ստացավ անհրաժեշտ տեղեկություններ։ Առանձնապես հետաքրքիր է այն, որ Սուվորովն այդ բանակցությունների ընթացքում հայկական պետականության վերականգնման հարցի կապակցությամբ տալիս էր մի շարք խոստումներ։

Շատ կողմերով հետաքրքիր այդ տեսակցությունների մասին բարեբախտաբար մեզ հասել է մի արժեքավոր փաստաթուղթ։ Այդ իրեն, բանակցությունների ակտիվ մասնակից Հովհաննի Արդությանի օրագիր՝ հիշատակարանն է, ուր նա հանգամանորեն պատմում է Սուվորովի և իշխան Պոտյոմկինի հետ ունեցած իրենց տեսակցությունների ու նրանց բովանդակության մասին։

1 Սուվորովն Արդությանի հետ ծանոթացել էր արդեն Դքիմի հայ բնակչության գաղթի ժամանակի Լազարեսի հետ նա ունեցել է մոտ, բարեկամական հարաբերություններ գեռես տարիներ առաջ։ Լազարենների առնմի պատմության մեջ Հովհաննես Լազարեսի մտական ծանոթների ու բարեկամների թվում հիշվում է նաև Սուվորովը։ Տես ՀՍՍՌ Հանրային Գրադարան, «Հազարյանների արխիվ», գործ № 106, էջ 21 և Պրօֆ. Ա. Զինովьев. «Исторический очерк Лазаревского Института», Москва, 1863 г., էջ 10; ինչպես զբում է Էզովը (տես՝ «Сношения Петра Великого с армянским народом», СПБ, 1898 г., էջ VII), իշխան Պոտյոմկինը և գեներալ Սուվորովը, զանազան տեղեկություններ և խորհուրդներ ստանալու համար, հաճախակի գիմումներ էին անում Արդությանին։

Առաջին տեսակցությունը, ինչպես վկայում է Արդությանի օրագիրը, տեղի է ունեցել 1780 թվականի հունվարի 1-ին։ Այդ տեսակցության ժամանակ մասնակցել է ոչ թե անմիջապես ինքը՝ Սուվորովը, այլ նրա լիազոր-ներկայացուցիչ գեներալ Իվան Պետրովիչ Գորբիչը, որը ծագումով Կովկասյան լեռնականներից էր։ Առաջին տեսակցության մասին Արդությանն իր օրագրում ասում է.

«1780 թվականի հունվարի մտին [1-ին] Իվան Պետրովիչ Գորբիչը եկավ մեզ մոտ և հայտնեց, որ իրենք գնում են պարսիկների դեմ՝ տիրելու համար ծովեզրյա վայրերին. հարցրեց պարսից երկրի մասին, թե քաղաքները ինչ հեռավորության վրա են գտնվում իրարից և ինչպիսի ուժ ունեն նրանք, որքն զորք ունեն հայերը և տաճիկները, սկսած Դերբենդից ու Գիլանից մինչև Թավրիզ ու Երևան և այնտեղից մինչև Ղարաբաղ ու Շիրվան։ Եվ մենք, որքան գիտենք, ասացինք, և ինքը գրեց ոռւսերեն ու տարավ»;²

Երկրորդ տեսակցությունը տեղի է ունեցել հունվարի 2-ին։ Այս անգամ տեսակցություն-խորհրդակցությունը վարել է անմիջապես ինքը՝ Սուվորովը։ Արդությանը գրում է.

«Հունվարի 2-ին գեներալ-պորուչիկ Ալեքսանդր Վասիլիկիչ Սուվորովը եկավ մեզ տեսության. և մեր ազնիվ Ազա Հովհաննեսը՝ նրա հետ, նույն նյութի և մեր երկրների մասին բազմաթիվ հարցեր տվեց մոտ երկու ժամ։ Մանրամասն հարցրեց՝ մեր իշմիածնի

¹ Լեռ—Հովհանի կաթողիկոս Արդության, Թիֆլիս, 1902թ. էջ 106.

² «Կոռոնկ Հայոց աշխարհին», Թիֆլիս, 1863, էջ 510. հմմտ. Ճիշտանի Հայոց պատմության, գիրք թ., Թիֆլիս, 1911 թ., էջ 23—24:

սուրբ աթոռի կացության մասին և մեծապես հու-
ստդրեց՝ որպես թէ մեզ մօտ վերստին իշխանություն և
հաստատվելու¹, և մեր մոտից գնալով պայծառափայլ
իշխան Գրիգորի Ալեքսանդրովիչ Պոտյոմկինի մոտ,
պատմել էր քաղաքների մասին մեր բոլոր ասածները»:²

Հունվարի 3-ին իշխան Պոտյոմկինի մոտ տեղի
է ունենում մի նոր տեսակցություն:

«Սույն ամսի 3-ին պայծառափայլ իշխանը խընդ-
րել էր մեզ ազնիվ Աղա Հովհաննես Եղիազարյանի
հետ միասին գնալ իր մոտ. միասին գնացինք նրա մոտ
և շատ խոսեցինք մեր ազգին և աշխարհին այցելու-
թյուն կատարելու մասին, և Աղա Հովհաննեսը շատ բան
պատմեց և հայերեն քարտեզով Հայաստանի գավառ-
ներն ու երկելի քաղաքները ցույց տվինք. և երբ
ինքը շատ հարց ու փորձ արեց մեր ազգի կացության
և սուրբ աթոռի ու կաթողիկոսի մասին, մենք թա-
խանձեցինք, որ մեզ մօտ հատուկ տերություն վերա-
կանգնվի՝ մեծ Հայաստանում՝ կենտրոն ունենալով
Երևան քաղաքը: Պատասխանեց, թե՝ կարելի է, բայց
հարկավոր է, որ ձեր պատրիարքը մի քանի իշխանների
հետ միասին ինդքամառույց լինեն ձեր ազգի փրկու-
թյան մասին, որպեսզի մենք այնուհետև գանք ձեզ
օգնելու: Հարցրեց վրաց արքայի մասին և ուրիշ շատ
բաներ. մենք և Աղա Հովհաննեսը շատ բան պատաս-
խանեցինք և մեծապես հուսագրվելով նրա խոսքերից,
ուրախացած գուրս եկանք և այժմ հուսալով մնում
ենք ժամանակին ստանալու նրա խոստացածը: Եվ հրա-
մայեց Աղա Հովհաննեսին զրել Զուզա՝ Էմին Աղային,³

¹ Ընդդումը մերն է—Մ. Ն.

² «Կոռունկ Հայոց աշխարհին», 1863 թ., էջ 511:

³ Խոսքը Հովհաննեսի մասին է:

որ գա, և նա զլեց ու այն նամակն ուղարկեց Հաշտարշանի նահանգապետին, որ ուղարկի Զուղա՝ նրան, որպեսզի շուտ գա»:¹

Զորբորդ, և ըստ երեսութին վերջին, տեսակցությունը տեղի է ունենում, Սուվորովի հրավերավ, իր մոտ Այս տեսակցության մասին Արդությանը գրում է.

«Առելի ամսի 13. ին, նույն գիներալ-պորուչիկ Սուվորովը մեզ՝ Աղա Հովհաննեսի հետ միասին՝ կանչել էր իր մոտ՝ տեղեկություն տալու Արցախ աշխարհում, որ այժմ կոչվում է Ղարաբաղ կամ Սղնախ, գտնվող մեր մելիքների կացության, վարքի, ինչպիս նաև որպիսության մասին. և մենք պատմեցինք նրանց հաջորդական կարգը, նրանց միաբան և տարածայն լինելը իրար հետ և թե ինչ է պատճառը, որ Փանախանը տիրել է նրանց, նրանց վշտակը ությունը և նրանց, այսինքն՝ մելիք Աղամի և մելիք Հովհանի տարագիր լինելը հայրենիքից և կը կին վերադարձը Զարաբերթ. Առաջինը մելիք Աղամն է, որ ունի հաղար պատերազմող մարդ՝ Ելկը որպէ՛ Իգիրմիդորդ. մելիք Հովհանիքը, նույն կերպ. և այս երկուսը ամեն բանում իրար հետ համերաշխ են, մեկը մյուսի խորհություղը լսում է, մեծ մասամբ անձնիշխան են, թե պետ և հնագանգվում են Շոշու խանին: Երբորդը՝ Դուռդակ, մելիք Եսային, կարողությամբ բարձր է մելիք-

1 «Կոռունկ Հայոց աշխարհին», 1863 թ., էջ 511: Այս տեսակցությունը նկատի ունենալով, պըոփ. Լեռն զլում է. «1780 թվականին հռչակագործ գիներալ Սուվորովը կազմում էր Հայտառանի ազատության ծրագիրը և նամակ գրել տվեց, որ էմինը կա Պետերբուրգ բանակցությունների համար» (Լեռ—«Հայկական ազագրություն», հատոր Բ., էջ 478): Լեռի աշքից վրեպել է այն հանգամանքը, որ 1780 թ. հունվարի 3-ի տեսակցությունը վարել է «չ թի Սուվորովը, այլ Պոտյումկինը»:

ներից, սակայն շատ նեղված է մելիք Շահնազարի նախանձից:

Չորրորդը՝ Վարանդ. մելիք Շահնազարը, որ տառ ճիկներին զորացնողն է և միաբան է խանի հետ. ունի կարողություն և հազար պատերազմող մարդ:

Հինգերորդը՝ Խաչեն. մելիք Միրզախանը և իր որդին, սրանք էլ ունեն մինչև հազար պատերազմող մարդ:

Մելիք Ալահվերդին, որ գոհնիկ է և խղճաբարու, ունի մինչև հինգ հազար պատերազմող մարդ:

Սույն Խաչենում է գտնվում և Աղվանից Հովհաննես կաթողիկոսը. Լենկթեմուրը տարագրեց աղվանից ազգը, և հայերը գալով բնակվեցին նույն տեղում, և կաթողիկոսությունը հարատեսց մինչև օրս:

Այստեղ պատմեցինք նաև էջմիածնում գտնվող ամենայն հայոց կաթողիկոսների գլխավոր իշխանության մասին. և նրանք դրի առան:

Աղա Հովհաննեսը պատմեց նաև մեր յուզբաշիների միաբան լինելու, տերության վերականգնման և անտեղի կորցնելու մասին: Նաև Դավիթը բեկի հղորանալու, արիության և նրա մահվանից հետո եղած անհաջողության մասին: Հարցրին նաև Հերակլ արքայի բարքի և նրա ուժի մասին. և ինչ որ ասացինք, զրեցին. Որ վեց ազգից՝ օսերից, թուշերից, փշա վլերից, քոտերից, չերքեզներից և լեզգիներից զորք է հավաքում: Սրանցից ոմանք հնազանդվում են նրան, ոմանց էլ նա վարձու է պահում: Իր տերության մեջ ունի նաև հայեր ու տաճիկներ և սրանցից էլ զորք է վերցնում: Այս բոլորը, ինչ որ այստեղ նշեցինք, Աղա Հովհաննեսի ասելու ժամանակ նրանք ոռւսերեն զբեցին:

Նաև Ախտանի ու Ղազ-
փանի տղամարդկանց մասին, որոնք կարող են պա-
տերազմի դեպքում մինչև հազար մարդ տալ խանին և
որոնք թեև առաջ Նախիջնանի խանի իշխանության
տակ էին, բայց այժմ ենթարկվում են Ղարաբաղի
խանի իշխանությանը. այս ևս զբեցին»:¹

Սուվորովը, ինչպես վկայում է Արգությանը,
մանրամասն տեղեկություններ է ճավաքել Ղարա-
բաղի վերաբերյալ Հետաքրքիր է, որ նրան պատմել
են նաև Դավիթ բեկի ապստամբության մասին. Այն
հանգամանքը, որ Սուվորովը առանձնապես հետաքրք-
րը վել է Ղարաբաղով, պատահական չէ իհարկե: Հան-
ձարեղ զորագարը քաջ գիտեր, որ Ղարաբաղի հայ
մելիքությունները իր ժամանակի հայ իրականության
զլխավոր ռազմական ռեժերն են և որ նրանք կարող
են մեծ դեր խաղալ դեպի Անդրկովկաս ծրագրիող ոռւ-
սական արշավանքի մեջ:

1780 թվականի հունվարին Մոսկվայում տեղի
ունեցած այդ տեսակցությունն խորհրդակցություն-
ների ժամանակ Հայաստանի տնտեսական ու քաղա-
քական զրության մասին Սուվորովին ներկայացվեց
ըստ ամենայնի հետաքրքիր հետեւյալ զեկուցագիրը:

«Արգեն մի քանի տարի է, ինչ Հայաստանը զբկվել
է իր թագավորից և առանձին վարչությունից, թյուր-
քերը և պարսիկները տիրել են շատ տեղերի, իսկ մի
փոքրիկ մասը, այսինքն դարաբաղցիները, մինչև այժմ
էլ մնում են ինքնուրույն, բայց յուրազգի որևէ պետ
լինելու դեպքում Հայաստանը վերստին կարող է
ամենաղյուրին կերպով վերականգնվել, և կարճ ժա-

¹ «Կառւնկ Հայոց աշխարհին», 1863 թ., էջ 511—513:

մանակում քիչ՝ ժողովուրդ չի հավաքվի, բնականից
ամուր տեղերը ոչ պակաս չափով կարող են ծառա-
յել իրենց պաշտպանությանը. հողի որակը և կլի-
ման անպակաս կերպով կարող են մատակարարել
հարկ եղած ամբողջ պաշտպանությանը, նույնիսկ կարող են
իրենց սեփական վառողը, երկաթն ու կապարն ունենաւ:

Հարաբաղի ու Սղնախի տիրողները թեպետ և կա-
խում չունեն. ոչ ոքից, բայց տարածայն լինելով, իրենց
մեջ հղորացրել են Փանախան կոչվող մահմեղական մի
խանի, որի պատճառով նրանց ուժը ջլատվել է, իսկ
այդ նույն հայ տիրողների անգիտությունն անօգտա-
կար է զարձնում նրանց թե՛ հենց իրենց համար և
թե՛ իրենց աղջի համար. իսկ մյուս մասը, այսինքն՝
Շամախին, Գյանջան, Երևանը, Նախիջևանը, Աղուլիսը
և մյուս քաղաքներն ու վայրերը գտնվելով պարսկա-
կան խաների տիրապետության ներքո, ամայացել են,
ժողովրդի մի զգալի մասը գաղթել է թյուրքական
մարզը, Փոքր Հայք, Վան ու Կարս, Երզրում և այլ վայ-
րեր: Եթե ժողովրդի ընտրությամբ կամ բարձրագույն
հաճությամբ ազգից մեկը պետ լիներ, բավական էր,
առաջին նվազ, որ նա կարողանար հաստատվել Դեր-
բենդում, և նրան օգնություն ցույց տրվեր տիրելու
Շամախուն ու Գյանջային, այն ժամանակ Ղարաբաղից
ու Սղնախից, որո նք, անտարակույս, կմիանան բավա-
կանաչափ զորք հավաքելով՝ կկարողանար հեշտու-
թյամբ տիրել Եր եանին և այլ քաղաքների:

Այդպիսի մի ձեռնարկության համար հարկավոր
է ունենալ միայն առաջին հանգը վանը և ոչ ավելի
քան երկու կամ երեք հազարանոց զորքի երկու տարվա
ովահպանության միջոցներ, մինչև որ նա կկարողանա
զըմավել Երևանը. այդ գալիքաները [պրովինցիաները]

Կըավելուց հետո նրանց եկամուտներով, այլևս առանց որեւէ կարիքի, կարելի կլինի պահել ոչ փոքր քանակությամբ զորք, իսկ սկզբնական շրջանի և հետագա ամրապնդման ու պաշտպանության համար անհրաժեշտաբար նա պետք է ունենա մի քանի հրետանավորներ ու հետեակ, որպեսզի առաջին պահ կարողանա պաշտպանվել և անվտանգ լինել, իսկ հետո, որպեսզի ազգային զորքը կարողանա սովորել կանոնավորության անհրաժեշտ զիտելիքները, որպեսզի հետագա ժամանակներում ի վիճակի լինի ամրացնելու իր սահմանները և ղաշտպանվելու թյուրքական ու պարսկական տերությունների հարձակումներից, այդպիսի մի ձևոնարկություն, որը միավետունու մի հատիկ խոսքով և չափազանց դյուրին կերպով, առանց որեւէ կառկածի, կարող է ի զործ զբվել, և Նրա հովանավորությամբ, կարճ ժամանակից հետո ոչ միայն ի հավերժ փառ Ռուսաստանի կհաստատի, այլև հետագա ժամանակներում կարող է ծառայել թյուրքական պետության և Պարսկաստանի վրա ձնշում գործելուն. որովհետեւ իրը հայ ժողովուրդը համախմբվի յուր իշխանության ներքո և որոշ չափով տարածի յուր սահմանները, ընդարձակ վայրերի մթերքներից ստացվելիք արդեն ոչ փոքրաքանակ եկամուտով ընդմիշտ կարող է 15-ից մինչև 20 հազար զորք պահել, իսկ թուրքերի կամ Պարսկաստանի զեմ պատերազմ ծագելու դեպքում ի վիճակի կլինի ժամանակի ընթացքում 60 հազար և ավելի զորք հանել, բացի դրանից, նույն առջը կարող է պարտավորություն ստանձնել, հարկ եղած զեղքում, Ռուսաստանին զորք տալ ըստ յուրաքանչյուր ժամանակի պահանջի և հավիտյանս երախտապարտ լինել Ռուսաստանին իր փրկության ու վե-

ըականգնման համար, և թյուրքական պետությունը
մի ժամանակ կարող է զգալ, թե այդ փոփոխության
հետեւանքով ժողովրդի և եկամուտների ինչպիսի կո-
րուստ է ունեցել: Իսկ առեառուրը Պարսկաստանի և
Ռուսաստանի միջև, որ երբեք հասցված չի եղել ցան-
կալի վիճակին և որը բոլոր եզրուացիների մոտ հա-
մարվել է նախանձելի ու չափազանց օգտակար, Հայաս-
տանում և Պարսկաստանում խաղաղություն հաստա-
վելոց հետո կարող է հասնել այնպիսի վիճակի, որ
Ռուսաստանի համար օգուտ բերի միլիոններով»:¹

Սուվորովին ներկայացված այս զեկուցագիրը, այն-
պես, ինչպիս որ նա հրատարակվել է „Собрание ак-
тов...“ եռնատորյակում, չունի ոչ վերնագիր և ոչ էլ
ստորագրություն: Զեկուցագրի տեքստի վերջում միայն
կա հետեւյալ ծանոթագրությունը. «Սույն զեկուցա-
գիրը 1780 թ. հունվարի 10-ին ներկայացված է Նորին
գերազանցություն Ալեքսանդր Կասիկիչ Սուվորովին»:²

Ո՞վ է այս զեկուցագրի հեղինակը. ամենայն հա-
վանականությամբ՝ Հովհաննես Լազարես: Պետք է
ենթազրել, որ այս զեկուցագիրը Սուվորովի արխի-
վում գտնված և «Պարոն Խվան Լազարես զեկուցագիրը
Հայաստանի ներկա վիճակի ու նրա վիրականգնման
միջոցների մասին» խորագիրը կրող այն փաստա-
թուղթն է, որի մասին հիշատակում է ոռւս բանասել
լ, Բրոսսեն:³ Սակայն առանձնապես հետաքրքիր է այն,
որ ոռւս ականավոր գործիչների արխիվներում երկար
ժամանակ պրատումեր կատարած և Բուտկովի հայտ-

¹ „Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа“, часть II, Москва, 1838 г., էջ 68—70:

² Սույն տեղ, էջ 70:

³ П. Г. Бутков. „Материалы для новой истории Кавказа“, часть III, СПБ, 1869 г., էջ 152:

նի աշխատության նյութերի ժամանակագրական ու
այրենական ցանկը կազմով Բլոսսեն պրում է, թի
այդ փաստաթուղթն ստորագրված է Սուվորովի կող-
մից,¹ ի՞նչ է նշանակում այս Մասում է ենթագրենք որ
հիշյալ զեկուցագրիը Հովհաննես Լազարեն ներկա-
յացրել է Սուվորովին, իսկ վերջինս էլ իր անունից
այն ներկայացրել է Եկատերինա Ա-ի արքունիքը:
Այսակից արդեն ինքնարերարար բխում է այն խմա-
կարեռը եղբակացությունը, թե Սուվորովը համաձայն
է եղել զեկուցագրի առաջադրած միջոցառումների,
արված գնահատականների և բոլոր մյուս մտքերի
հետ Այս իմաստով էլ վերը բերված անստորագրի
զեկուցագրի հեղինակ կարելի է համարել ոչ միայն
Հովհաննես Լազարենին, այլև Սուվորովին:

1780 թվականին Սուվորովին ներկայացվել են
նաև այլ կարգի զեկուցագրեր: Այս մասին հետաքրքիր
տեղեկություններ են հայտնում Կարապետ Շահնազա-
րյանը իր «Ծրագիր Պատմութիւն Հայաստան աշխար-
հին» և Ա. Խուզաբաշելը իր „Обозрение Армении“
աշխատությունների մեջ, Խոսելով Իսրայել Օրու գոր-
ծունեության մասին, Շահնազարյանը գրում է, «Զա-
միչյան (այդպես է բնագրում — Մ. Ն.) և Զաքչյան Մխի-
թարյանները, իրենց Հայոց Պատմության մեջ, չեմ
իմանում ինչ սխալ աղբյուրից քաղելով, այս կարեռը
զեղքին պատմության մեջ (Իսրայել Օրու գործունեու-
թյան պատմության մասին է խոսքը — Մ. Ն.) մեծ և
ծանր զանցառություններ և սխաներ են արել: Մեր
աղբյուրներն, ընդհակառակը, Հայաստանի մի մեծ
մարդու երկու հիշատակարանից են քաղած, որ այս
գործքին մանրամասն իրերու վրա տեղյակ և ժամա-

¹ П. Г. Бутков. „Материалы...“, § 152:

նակալից է եղել այս հիշատակարանից մինը 1780 թվին Սուվորով Մարտաջախտին և մյուսն էլ 1790-ին կատարինե Բ. Արք է հաղորդված»:¹

Թե այդ ինչ հիշատակարաններ են, մենք չգիտենք: Բայց Շահնապարյանի այս տողերից պետք է եղրակացնել, որ 1780 թվականին Սուվորով Մարտաջախտին² ներկայացվել է մի «հիշատակարան», ուր մանրամասն խոսվել է Խորայիլ Օրու գործունեության մասին: Շահնապարյանի ակնարկած «Հայաստանի մեծ մարդը», կարծում ենք, Արդությանը կամ Լաղարել պետք է լինի:

Ի վերջո հիշենք նաև հետեյալը: 1780 թվականին ոռւս և հայ քաղաքական գործիչների միջև տեղի ունեցած բանակցությունների ժամանակ Լաղարել և Արդությանը, որ մեծ հույսեր ու ակնկալություններ ունեին, պատրաստել են Հայաստանի քարտեզը և այն ներկայացրել ոռւսական արքունիք: Ըստ երեսութիւն այդ շրջանում Էլ հրապարակ բերվեցին ապագա անկախ հայկական պետության և Ռուսաստանի միջև կնքվելիք դաշնագրության այն հայտնի նախոգծերը, որոնք կը ում են «Կերպ դաշնագրութեան ի մէջ երկու ազգաց՝ Ռուսաց և Հայոց» վերնագիրը³:

Հայ քաղաքական գործիչների՝ Լաղարեկ և Արդությանի հետ իր տեսակցություն-խորհրդակցություն-

1 «Ծրագիր՝ Պատմութիւն Հայաստան աշխարհին և տեսութիւն հին Հայաստանի և նրա այժմեան վիճակին վրայ», Կարապետ վարդապետի Շահնապարեանց, Թիֆլիս, 1863 թ., էջ 108; Հմմտ. Ա. Խոդաբաշև. „Обозрение Армении”, СПБ, 1859 թ., էջ 407: Խորաց կարգի բառացիորեն կրկնում է Շահնապարյանին:

2 Մարտաջախտ—զորավար. տես «Հայկազեան բառարան»:

3 Այս փաստաթղթերը հրապարակվել են «Ծիկն Աւարայրի» և «Փարիզ» հանդեսներում, Աղանյանի «Դիվան»-ում և «Նորք» ամսագրում:

Ները Մոսկվայում ավարտելուց հետո Սուվորովը մեկնեց Աստրախան, որպես այդ նահանգի սուսական զորքերի հրամանատար: Աստրախանում նա, իր սովորության համաձայն, գործի դիմեց մեծ եռանդով ու ոգեստությամբ: Կարճ ժամանակամիջոցում Սուվորովը մանրամասն տեղեկություններ հավաքեց Անդրկովկասյան երկրների ու Մերձկասպյան շրջանների մասին: Բուտկովը խոսելով այս մասին, գրում է.

«Գեներալ-պորուչիկ Ալեքսանդր Վասիլևիչ Սուվորովը 1780 թ. ժամանեց Աստրախան, իր հրամանատարության տակ ընդունեց Կազանյան դիվիզիան և ամենամանրամասն տեղեկություններ էր հավաքում Պարսկաստանի, Հայաստանի, Շիրվանի, Դիլյանի մասին և ուղարկում իշխան Գրիգորի Ալեքսանդրովիչ Պոտյոմկինին»:¹

Թի ինչ տեղեկություններ է հավաքել և ինչ բովանդակության զեկուցագրեր է կազմել Սուվորովը Աստրախանում հղած ժամանակ, այդ ևս հայտնի է մեզ: Վերը հիշված է, Բրոսսեն գրում է, որ Սուվորովի թղթերում գտնված են նրա (Սուվորովի) կողմից ստորագրված հետևյալ զեկուցագրերը. 1. Մարշրուտ Ղզլարից մինչև Ռեշտ. 2. Աստրախանից մինչև Ռեշտ տարածության նկարագրությունը՝ պատմական մանրամասնություններով. 3. Ճանապարհը Սալյանից Լենգերուղ, Թալիշից Երևան. 4. «Պարոն Իվան Լազարեի զեկուցագրը» Հայաստանի ներկա վիճակի և նրա վերականգնման միջոցների մասին. 5. Ժամանակակից տեղեկություններ Ղարաբաղի մասին. 6. Ժամանակակից տեղեկություններ Վրաստանի մասին, և այլն:²

¹ Бутков. „Материалы...“, часть II, № 71:

² Նույն տեղ, մասն III, № 152:

Այս փաստաթղթերի առկայությունն ինքնին արդեն ոչ մի կասկած չի թողնում այն մասին, որ Սուվորովը խսկապես մանրամասնորեն ուսումնասիրել է Հայաստանը և հարեան երկրները։ Պետք է ավելացնել որ հիշված փաստաթղթերով չի սպառվում այն զեկուցագրերի շարքը, որ մեծ զորավարը կազմել է Անդրեկովկասի մասին։ Բրոսեի կողմից հիշատակվածները միայն այն գեկուցագրերն են, որոնք ստորագրված են Սուվորովի կողմից 1780 թվականի փետրվարի 15-ին։ Ոչ մի հիմք չկա կարծելու, թե 1780 թվականի փետրվարի 15-ից հետո Սուվորովը, որ Աստրախանում մնաց մինչև 1781 թվականի վերջը, Անդրեկովկասի, ներառյալ և Հայաստանի մասին նոր գեկուցագրեր չի կազմել։

Սուվորովի աշխատանքը, սակայն, չի սահմանափակվել միայն ուսումնասիրության խնդիրներով։ Աստրախանում գտնված ժամանակամիջոցում նա կապ է հաստատել և նամակադրություն ունեցել Ղարաբաղի հայ մելիքների հետ։ Դժբախտաբար առայժմ մեր ձեռքի տակ չկան այդ նամակները, բայց մենք ունենք ուրիշ կողմանակի վկայություն, որը հաստատում է Սուվորովի և Ղարաբաղի հայ մելիքների միջև հաստատված կապի և նամակադրության փաստը։ Գյուլխստանի հայ մելիք Ֆրիդնը Պավել I կայսրին հասցեագրված իր նամակներից մեկում (գրված, հավանաբար, 1800 թվականին) պատմում է։

«Սրանից 20 տարի առաջ, գեն. գրաֆ Սուվորովը, այժմ Զ [երդ] կ [այսերական] Մ [եծության] ֆելլամարշալ, գտնվելով Աստրախանում, այնտեղից գրում էր Ղարաբաղ, իմ հայր մելիք Բեգլար-Հովսեփին և Զ [երդ] Մ [եծության] հանգուցյալ մոր անունից

առաջարկում էր, որ եթե նա, ըստ ուղղափառության,
ցանկություն ունի իր հպատակների հետ տեղափոխ-
վել Ռուսաստան, ամենաողորմածաբար կընդունի Հա-
մառուսաստանյան Արքունիքի հողատակ. հայրս պա-
տասխանում է, թե երբ Ռուսաստանի հաղթական զորքը
կուղարկվի այստեղ, ապա ինքը նրան կընդունի իր
խնամքին, կհոգա օտար երկրում պահպանության հա-
մար անհրաժեշտ ծախսը և չի հապաղի նրա ու իր
հպատակների հետ միասին մեծ հոժարությամբ տե-
ղափոխվել Ռուսաստան»:¹

Դարաբաղի մելիքներին Սուվորովս արդյոք գրել
է ուրիշ նամակներ ևս: Կարծում ենք՝ այս, որովհետեւ
Դարաբաղի հայ տերերի հետ քաղաքական կապ պահ-
պանելու հարցը, հասկանալի պատճառներով, Սուվո-
րովին առաջադրված կարեոր խնդիրներից մեկն էր:
Սուվորովը, որ նախապատրաստում էր ոռուսական զոր-
քերի արշավանքը գետի Անդրկովկաս, մեծ ուշադրու-
թյուն դարձրեց Դարաբաղի վրա: Նա հայ մելիքներից
մեծ սպասելիքներ ուներ:²

Սուվորովս Աստրախանում կապեր ուներ հա-
յերի հետ: Նա անգամ մի շարք լուրջ, կարեոր նշա-
նակություն ունեցող հարցեր աշխատել է լուծել հայերի
միջոցով: Այս տեսակետից բնորոշ է հետեւյալ վաս-
տը: Խանական ներքին երկպառակությունների ու
կոիզմերի հետեւանքով Գիլանի խան Գեղաեղը 1779

¹ „Акты, собранные Кавк. Археогр. Ком.“, том I, Тиф-
лис, 1866 г. Док. № 871, § 631.

² Պետք է հնթաղբեր որ Մասլվայի ու Ղենինդրաղի արխիվ-
ներում պարպատմներ կատարելու դեպքում Սուվորովի և հայ մե-
լիքների կապի մասին հրապարակ կբերվին նոր վաստաթղթեր ու
նամակներ:

թվականին ստիպված եղավ թողնել իր երկիրը։ Նա 1780 թվականին պատսպարություն խնդրեց ոռուաւկան պետությունից։ Սուվորովը բանակցություններ վարեց Գիլանի խանի հետ և առաջարկեց նրան իր գույքով ու մարդկանցով Ռուսաստան անցնել։ Սուվորովն իր այդ բանակցությունները Գիլանի խանի հետ վարեց մի հայի միջոցով¹

Սուվորովն Աստրախանում երկար չմնաց։ 1781 թ. վերջին (գեկտեմբերին) այլ աշխատանքի նշանակվելու կապակցությամբ նա Աստրախանից հետ կանչվեց։ Այդ օրերին տեղի ունեցավ ոռուական արտաքին քաղաքականության զիգզագներից մեկը, որի շնորհիվ և Անդրկովկասի արևելյան շրջանների ու Մերձկաստյան երկրների հարցը որոշ ժամանակով կորցրեց իր նախկին ակտուալությունը²։ Սուվորովի սպասելիքներն իդերեկ ելան։ Այն գործը, որ նա փայփայում ու սիրով նախապատրաստում էր, անկատար մնաց։

Հեռանալով Աստրախանից և այլ պարտականությունների կատարման անցնելով՝ Սուվորովը բավական երկար ժամանակ առիթներ չունեցավ նորից զբաղվելու Անդրկովկասի, մասնավորապես Հայաստանի, հայ ժողովրդի հարցերով։ Սակայն շատ բնուրոշ է, որ այն շրջանում, երբ մեծ զորավարն զբաղված էր ուրիշ՝ հայ ժողովրդի հետ կազ չունեցող ինդիրներով, անգամ այդ շրջանում նա շարունակում էր

¹ Бутков. „Материалы...“, часть II, № 81.

² Ճիշտ է՝ իշխան Պոտյումկինը նույն եռանգով շարունակեց քաղաքական իր հարաբերությունները հայերի հետ։ Ավելին, նա դոկտոր Ռեյգնենին քաղաքական-գիվանադիտական նպատակներով 1783 թ. Հայաստան ուղարկեց։ Սակայն այս բոլորն այսուամենայնիվ չեն բացասում ոռուական արտաքին քաղաքականության այն զիգզագը, որի մասին մենք հիշեցինք վերևում։

Հետաքրքրվել Հայաստանով ու հայ ժողովրդով։ Այդ
է ապացուցում փոքրիկ բայց բավական պերճախոս
հետեւյալ? փաստը։

1786 թվականին Պետերբուրգում ոռւսերեն թարգ-
մանությամբ լույս տեսավ՝ XVIII դարի նշանավոր
հայ լուսավորիչ և հայրենասեր Մովսես Բաղրամյանի
«Նոր տետրակ», որ կոչի «Յորդորակ» հայտնի աշխա-
տությունը, որը հայ պատրիոտիզմի լավագույն մանի-
ֆեստներից մեկն է հանդիսանում։ «Յորդորակ»-ի հրա-
տարակված ոռւսերեն թարգմանությունն ունի հետեւ-
վյալ վերնագիրը.՝ „Краткое историческое и географи-
ческое описание царства армянского из древних
писателей сего народа яко верных источников, соб-
ранное и на армянском языке в Индии и изданное
Яковым Шамировым, а ныне с армянского на Рос-
сийский язык переведенное подпоручиком Вар-
лаамом Вагановым.

Գրքի վերջում, «Բարեհաճությամբ բաժանոր-
դագրվածների ցանկը» խորագրի տակ, գրված է աշ-
խատության բաժանորդների ցուցակը։ Եվ ահա այդ ցան-
կում, 19-րդ համարի տակ, հիշվում է՝ «Նորին պայ-

1 «Նոր տետրակ», որ կոչի «Յորդորակ»-ը լույս է տեսել 1773
թվականին Մադրասում, Շահամիրյանի տպարանի հրատարակու-
թյամբ։ Երկար ժամանակ կարծում էին, թե գրքի հեղինակը
Շահամիր Սուլթանում Շահամիրյանի որդի Հակոբ Շահամիրյանն
է։ Այժմ կասկածից վեր է, որ «Յորդորակ»-ի հեղինակը սյու-
նեցի քահանա Մովսես Բաղրամյանն է։ Նա իր հենց այդ ստեղ-
ծագործության համար արժանացավ բանադրանքի Հայաստանի
աղատգրությունն ապստամբության միջոցով լուծելու առկտի-
կայի թշնամի Միմեռն երեանցի կաթողիկոսի կողմից։ 1786 թվա-
կանին լույս տեսած «Յորդորակ»-ի ոռւսերեն թարգմանությունը
հայերեն տեքստի մի մասն է միայն։

ծառափայլություն Ալեքսանդր Վասիլեիչ Սուվորովյան
Սուվորովը Վահանովի թարգմանական տշխա-
տանքի բաժանորդ էր զառնում, ինարկե, ոչ ձեի հա-
մար: Սուվորովը Բաղրամյանի «Յորդորակ»ի ընթեր-
ցող դարձավ շնորհիվ իր այն հետաքրքրության, որ
նա զրեթե միշտ հանդես էր բերում դեպի Հայաստանն
ու հայ ժողովուրդը:¹

4

Սուվորովը մի նոր առիթ ունեցավ շփվելու հայ
զանդաճների հետ և զբաղվելու նրանց հարցերով
ուռւսթուրքական երկրորդ պատերազմի շրջանում
(1787—1791 թ. թ.): Այս անգամ հոչակավոր զորա-
վարը գործ էր ունենում Մոլդավիայի, Վալախիայի և
Բուլղարիայի հայ բնակչության հետ:

Ուռւսթուրքական երկրորդ պատերազմում Սու-
վորովը մասնակցեց որպես դեկավար ու առն ավող
զորավար: Նրա բաղմաթիվ հաղթանակները գծեցին
պատերազմի հունը և վճռեցին նրա ելքը: 1787 թ.
հոկտեմբերին Սուվորովը ճակատամարտ շահեց Կին-
բուրնի մոտ, 1788 թ. հուլիսին՝ Օչակովի տակ: 1789 թ.
հուլիս և սեպտեմբեր ամիսներին նա ունեցավ
փայլուն հաղթանակներ Ֆոքշաններում և Ռիմ-
նիկում: 1790 թ. դեկտեմբերին Սուվորովը գրավեց
հանրահոչակ և անխոցելի համարված Իզմայիլ բերդը:

¹ 1784 թվականին ցարական կառավարությունից օգնու-
թյուն խնդրելու և նրա հետ քաղաքական բանտկցություններ
վարելու համար Ռուսաստան եկավ էջմիածնի կաթողիկոսության
ներկայացուցիչ Ստեփան Դավթյանը, որ ռուսական պաշտոնական
շրջաններում սահցավ «Արարատյան դեսպան» հորջորջաւմը: Դավ-
թյանը մտ հարաբերություններ ստեղծեց Սուվորովի հետ և հա-
ճախ դիմում էր նրա օգնությանն ու հովանավորությանը:

Սուվորովի հաղթական բանակի անցած ճանապարհի վրա ընկած շատ քաղաքներում ու բնակավայրերում, ինչպես օրինակ, Ֆոքշանում, Յանսում, Բենգերում, Իզմայիլում և այլն, կար հայ բնակչության մի հատված, որը մայր երկրից գաղղթել և այդ տեղերում բնակություն էր հաստատել զեռ գարեր առաջ: Մուսական կառավարությունն աշխատեց այդ հայ բնակչությունը ևս, Ղրիմի օրինակով, հենց պատերազմի օրերին, գաղթեցնել զեպի Մուսաստան: Այդ գործը հաջողությամբ կատարելու նպատակով իշխան Պոտյումկինը գործող բանակ հրավիրեց Հովսեփ Արդությանին: Վերջինս ուրախությամբ ընդունեց իրեն արված առաջարկը և շուտով երեաց Սուվորովի բանակում: Նախկին ծառոթները նորից հանդիպեցին իրար:

Արդությանի վրա այդ շրջանում պարտականություն էր գրված հորդորել հայ բնակչությանը գաղթելու գեղի Բուսաստան և անմիջականորեն կազմակերպել այդ գաղթը։ Արդությանն այդ հիմնական խընդիրների հետ միասին զբաղվում էր նաև այլ հարցերով։ Պատերազմական գործողությունների հետևանքով աղքատության, թշվառության հասած հայ բնակչությանը տնտեսական և այլ կարգի օգնությունն ցույց տալու խնդիրն ևս մեծ չափով զբաղեցնում էր նրան։ Եվ ահա, հենց այդ հարցերի կապակցությամբ, Արդությանը դիմումներ է անում ոռոսական գործող բանակի հրամանատար Սուվորովին, և վերջինս նորից առիթներ է ունենում զբաղվելու հայ հասարակության խնդիրներով։¹

¹ Արդությանին հաջողվեց Մոլտավիայի, Վալախիայի և Բուլգարիայի հայ բնակչության մի տովար հատված դադթեցնել գեպի Եկատերինոսլավի նահանգը՝ Թուքասսարի շրջակայքը։ Այստեղ հայ բնակչությունը Եկատերինա Ա-ի հատուկ հրավարտակի հե-

Արդությանը, գտնվելով Սուվորովի քանակում,
ականատես է եղել մի շարք հետաքրքիր անցուղար-
ձերի և մոտիկից գիտել է այն իրազբությունը, որ այդ
ժամանակ ստեղծվել էր պատերազմի Բալկանյան ռազ-
մաքեմում: Իր դիտումների ու տպավորությունների մի
մասը Արդությանը գրի է առել իր, օրագրում, որը
բարեբախտաբար հասել է մեզ և պարունակում է
բավականին հետաքրքիր տեղեկություններ: Հայտնի
իզմայիլ բերդի ու քաղաքի գրավման, ինչպես նաև
ստեղծված դրության ժամանակ իզմայիլի հայ բնակ-
չության թշվառ կացության մասին Արդությանն իր
օրագրում ասում է:

«Դեկտեմբեր ամսի 11-ին, գրաֆ Ալեքսանդրովիչ
Սուվորովը, չորեքշաբթի օրը, լուսաբացին, ժամի
հինգին, մաստի բռնվելով մինչև ժամի տասնեւմեկը,
մեծ արյունհեղությամբ և մեծ կոտորածով գրավեց
իզմայիլ քաղաքը և որի քաշեց բոլոր թուրքերին,
մեծից մինչև փոքրը, ավելի քան 21,000 անձ և գերի
վերցրեց 8,000 հոգի: Նրանց [թուրքերի] զորքերը
կողոպտեցին քրիստոնյաների եկեղեցիների բոլոր
անոթները և սպանեցին մեր ազգից 60 անձ: ոմանց
էլ գերեցին, որոնց մենք գտանք և ազատեցինք:
բազմաթիվ թաքցրած իրեր գտնվեցին և ավար վերց-
վեցին: մերոնք մնացին բոլորովին տնանկ ու խեղճ,
որոնց Աստված օգնության հասնի:

Սույն ամսի 13-ին, Պայծառափայլի հրամանով,
հիվանդագին վիճակում մեր Կարապետ վարդապետի
ու մերայինների հետ միասին, դնացինք իզմայիլ և
սույն ամսի 23-ին մտանք իզմայիլ քաղաքը:

ման վրա կառուցեց Գրիգորիովով քաղաքը („Կավկազский Вест-
ник“, № 10, 1901 թ., Приложение, էջ 26):

Սույն ամսի 23-ին, քաղաքը գրավելուց 12 օր հետո, մենք մտնելով Իզմայիլ մեր ժողովրդի մարդկանց գտանք հարվածված և ոռվից նեղված. սփոփելով նրանց, մեր ուժերը ներածի չափ ողորմություն արինք և նրանց վերքերը կապելով, մեծ ցասումով ու սրտի կսկիծով, լալով ու կոծով վերադարձանք Յաշ [Յասսա]. այսպես էին մերկացրել եկեղեցիները, որ պատարագի համար զգեստ չէր մնացել իսկ եկեղեցական դարդերից ինչ կոոր որ մնացել էր, նրանից մի կերպ զգեստներ կարեցինք... Տների թիվը էր 322, անձերինը՝ 1650։¹

Ավելորդ չէ հիշատակել, որ Սուվորովի գլխավորած ռազմարշամբներին և մասնավորապես Իզմայիլի հերոսական գրավման օպերացիաներին, ուստի մեծ զորավարի անմիջական հրամանատարության տակ, քաջարար մասնակցել են մի քանի հայ զորավարներու Այս մասին „Собрание актов...“ եռահատոր աշխատությունը հաղորդում է հետեւյալ հետաքրքրեր տեղեւ կությունը.

«Հոչակավոր զորավար գեներալիսիմուս իշխան Ալեքսանդր Վասիլիկի հատալիյսկու, Գրաֆ Սուվորով Ռիմիկսկու գլխավորությամբ տեղի ունեցած պատերազմների և արշավանքների մեջ հայերից գտնվում էին՝ փոխազնդապետ Խաստատովը, փոխազնդապետ Մանենը և մայոր Լալակը. այս վերջին երկուսը գեներալիսիմուսի հավատարմատար անձերն ու սիրելիներն էին: Խաստատովը իր քաջության և մատուցած ծառայութունների համար հետազուրկ արժանացավ զեներալ-մայորի աստիճանի և շքանշանների, իսկ Մանենը, իցավ զորավարի և բոլոր նրան հանաչողների, սպանվեց Իզմայիլի գրավման

1 «Կոռունկ Հայոց աշխարհին», 1863 թ., էջ 428.

ժամանակ։ Սույն քաջարի Մանեկը արտասովոր անվեհերությամբ աչքի ընկավ գրոհի ժամանակ։¹

5

Այն գործուն մասնակցությունը, որ ի հայտ բերեց
ոռւս հոչակավոր զորավար Ա. Վ. Սուլորովը 1770—
1790 թ. թ. ոռւս-հայկական հարաբերությունների
մեջ, և այն ուշադիր ու սրացավ վերաբերմունքը, որ
նա այդ հարաբերությունների ժամանակ ցուցաբերեց
դեպի հայ ժողովուրդը, իհարկե, անհետեանք չմնա-
ցին։ Դեռ իր կենդանության ժամանակ հանձարեղ
զորավարը հայ ժողովը դիմումի համբավ ստացավ
և այդ պատճառով էլ առանձին հարգանք վայելեց հայ
հասարակության կողմից։ Շատ բնորոշ է այդ տեսակե-
տից Արդությանի վերաբերմունքը դեպի Սուլորովը։ 1795
թվականին, եթե Անդրկովկասը բարբարոս Ազա Մահ-
մեդ խանի աղետաբեր արշավանքի հետեանքով ծանր ճշգ-
նաժամ ապրեց, Արդությանն իր հայացքը նորից ուղղե-
լով դեպի Հյուսիս՝ Պետերբուրգ, իրական և բարեկամա-
կան օգնություն սպասեց առաջին հերթին Սուլորո-
վից։ 1795 թվականի վերջին Եկատերինան արշավանք
նախաղաւարաստեց դեպի Անդրկովկաս։ Այդ արշավան-
քի վեկավարությունը նա դրեց զբաֆ Զուլբովի վրա։
Իմանալով այդ մասին, Արդությանը գրում է այդ ժա-
մանակ Պետերբուրգում գտնվող Ստեփան Դավթյանին,
որ նա աշխատի, որպեսզի արշավանքի դեկավարու-
թյունը հանձնարարվի ոչ թե Զուլբովին, որին Արդու-
թյանը տալիս էր բացասական գնահատական, այլ՝
Սուլորովին։ Դավթյանին ուղղած 1795 թվականի

¹ „Собрание актов...”, часть III, т. 2, 302:

դեկտեմբերի 15 թվակիր իր այդ նամակում Արդությանը Սուվորովին անվանում էր «տառապօջներին օգնության հասնող և զերիներին փրկող Սուրբ Գևորգ»։ Այդ նույն նամակում Արդությանը Սուվորովի մասին ասում էր, որ նա՝ Սուվորովը մի ժամանակ ցանկություն է հայտնել լինել Անդրկովկասում և սիրել է իր՝ Արդությանի հայրենիքը։ Ահա մի քաղվածք չափազանց հետաքրքիր այդ նամակից։ Սրտի մեծ ցավով պատմելով աղա Մահմեդ խանի կատարած ավերումների մասին և ընդգծելով այն հանգամանքը, որ ինքը առանձին հույսեր չի կապում Զուրովի հետ, Արդությանը գրում էր Դավթյանին.

«... բայց եթե ուզարկեն գրաֆ Սուվորովին, ամբողջ գործը միանգամից կվերջանա ի բարօրություն մեր։ Այս գործով էլ 1780 թվականի հունվարի 1-ին հենց նա նշանակվեց։ Նա եկավ ինձ մոտ և Տուրջինովի տանը գրի առավ ամեն ինչ. այն ժամանակ նա ինքն էլ ցանկանում էր լինել այն կողմերում, բայց հետո ամեն ինչ փոխվեց։ Խնձնից բարեներ ու բարեմաղթություն նրան և ասա՝ ով սուրբ Գևորգ, տառապողներին արագաթուիչ օգնության հասնող և գերյալներին փրկող, շտապիր օգնելու տարաբախտ վրաց թագավորությանը և քո կողմից սիրված իմ հայրենիքին։ Կորիմ և ես, բայց գլխումս խելք չի մնացել»:¹

¹ „Кавказская старина“, 1872 г. № 2, էջ 30—31. Հմետ. „Кавказский Вестник“, 1901 г., № 4, էջ 197—199. Նամակի հայերեն տեքստը ձեռքի տակ չունենալու պատճառով բերում ենք նրա ուսւերեն թարգմանությունը՝ կատարված Ա. Երկոյանի կողմից։ Նամակի վերջում Արդությանը նորից հիշեցնում է. «Եթե նրան (այսինքն Զուրովին—Մ. Ն.) ուզարկեն Սուվորովի հետ միասին, ապա ամորձատվածը (աղա Մահմեդ խանի մասին է խոսքը, որը զեռ յոթ տարեկան հասակից ներքինի է եղել—Մ. Ն.) կը ոնդի և նրա գորքերը փախուստի կմատնքեն ու կոչնչացվեն»։

Արդությանի այս նամակը պերճախոս մի վկայություն
է այն մասին, որ Սուվորովս իսկապես հայ ժողովրդի
բարեկամի համբավ է ունեցել հայ քաղաքական գոր-
ծիչների շրջանում, որ վերջիններս մեծ հարգանք
են տածել զեպի ոռւս հոչակավոր զորավարը:¹ Այդ-
օրինակ ջերմ, հարգալից վերաբերմունքի արտահայ-
տություն պետք է համարել նաև այն հանգամանքը,
որ հանճարեղ զորավարի անվան շուրջը հայ ժողովը-
զի մեջ հյուսվել են զանազան լեզենդանման ասույթ-
ներ:

Ժողովրդական այդպիսի ասույթներից մեկի մա-
սին 1863 թվին հիշատակում է «Կառնուկ Հայոց աշ-
խարհին» հանդեսը.

«Մեր քաղաքում (այսինքն Թրիլիսիում—Մ.Ն.),—
պատմում է հոգվածագիր Հովսեփ Փոնդոյանցը,—կա
մի պատվելի ծեր մարդ՝ որնոր ճանաչում է էլել Հով-
սեփ կաթուղիկոսին. էս մարդը Գրիգոր Վասիլիչ Շերպի-
լյանցն է, որն շատ հետաքրքիր բան է պատմում Հով-
սեփ կաթուղիկոսի վրա. օրինակի համար ասենք. նա
պատմում է, որ Ցիցիանովը չէր սիրում Հովսեփ կա-
թուղիկոսին, որովհետև Ցիցիանովը երևելի Սուվորովի
ազյուտանու ընելով՝ մեկ անգամ կաթուղիկոսի անց-
կենալու վախտ, նրան իրա զորքով պատիվ չի տվել.

¹ Արդությանը այլ կատակցությամբ Սուվորովի մասին
հիշում է մի անգամ ևս: 1799 թվին, երբ մեծ զորավարը Հյու-
նիսային իտալիայում պարտությունների էր մատնում մեծ
հոչակ ձեռք բերած ֆրանսիական բանակներին, Արդությանը 8.
Ստեփանեին հասցեազրված նամակում հետեւյալն էր գրում Սու-
վորովի մասին. «Գրաֆ Սուվորովը զբանակսիզ յոյժ խորտակէ.
տէր մանրեսց զնոսա» (անս՝ «Դիւան Հայոց պատմութեան», զիբք
թ., մասն տուաջին, էջ 273):

և էտուր համար Ցիցիանովին Սուվորովը պատժել է¹:
Ծերունի Շերդիլյանցի պատժածը, կարծում ենք,
Ժողովրդական ստեղծագործության արգասիք է և որպես
այդպիսին էլ շատ բնորոշ է:

Ի վերջո, ավելորդ չենք համարում հիշատակել
նաև հետեւյալ փաստը: Պյուտը Խ-ի շրջանից արդեն
ուռւական բանակում գործում էին բավական թվով
հայ գեներալներ: XVIII դարում իրենց խիզախու-
թյամբ և արվեստի վարդեառությամբ առանձնապես
աչքի ընկան հայ գեներալներ Եղիազար Քրիստա-
փորյանը, Հովհաննես Յուզբաշյանը, Խաստատովը
և Ա. Լազարես: XIX դարում մեծ համբավ ձեռք
բերեցին արի և տաղանդավոր հայ գեներալներ՝
Վալերիան (Մոստոմ) Մադաթովը, Բարսեղ Բեհրու-
թովը, Մովսես Արդությանը, Արշակ Տեր-Ղուկաս-
սովը, Լազարես, Շելկովսիկովը, Ալիսազովը և ուրիշ-
ները: Մոռւական բանակի այդ հայ գեներալներից
շատերն իրենց համարում էին Սուվորովի աշակերտ-
ներ և մեծ հարգանքով ու ակնածությամբ էին խո-
սում ոռւս հանճարեղ զորավարի մասին: Նրանք ուղ-
մական արվեստի իրենց պրակտիկայում առաջնորդ-
վում էին ոռւս մեծ զորավարի մշակած հոչակավոր
սկզբունքներով: Սուվորովյան շկոլայի հարազատ ներ-
կայացուցիչներից մեկն էր համակալես Մադաթովը
(1782—1829), ոռւս ժողովրդի 1812 թվականի հայրե-
նական պատերազմի այդ ներոս ու տաղանդավոր գե-
ներալը, որի ուղմական գործողությունների տակտի-
կան ամբողջովին բխում էր ուղմական արվեստի ոռւ-
վորովյան դրույթներից: Մադաթովի համարձակ գոր-
ծողությունները, անսահման քաջությունը, արագորեն

1. «Կոռունկ Հայոց աշխարհին», 1863 թ., էջ 282:

կողմնորոշվելու, գլխավոր հարվածի օրեկտն ընարելու, թշնամուն շրջանցելու և վճռական գրոհներ կազմակերպելու տակտիկան, դեպի շարքայիններն ունեցած ջերմ վերաբերմունքը և այլն, իրենց վրա կրում էին Սուվորովի սկզբունքների խիստ խորը կնիքը։ Խոսելով այս առթիվ, ուազմական հարցերի ուսումնագետը 1914 թվին Մաղաթովի մասին իրավացիորեն գրում էր.

«Դա գեներալ էր սուվորովյան այն դպրոցի, որը ուսումնական բանակին տվել է այնպիսի մարդիկ, ինչպիսիք են՝ Բագրատիոնը, Միլորադովիչը, Երմոլովը, Դենիս Դավիդովը, Կոտլյարևսկին»։¹

Սուվորովի ուազմական հանճարի աղղեցությունը մեծ է եղել և հետագա շրջանների հայ զինվորականության վրա։ Մուս հոչակավոր զորավարի անունն ակնածությամբ ու հարգանքով են հիշում նաև մեր օրերի հայ մարտիկները։ Սուվորովը և՛ որպես զորավար, և՛ որպես քաղաքական գործիչ միշտ ջերմությամբ կհիշվի հայ ժողովրդի կողմից։

1 „Военная Энциклопедия”, т. XV, 1

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0043536



ЦЕНА

A	I
6925	